

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԸ՝ ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՄԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ***DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i72.221***ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննվել են Պարույր Սևակի՝ Է.Մեծելայտիսից կատարած թարգմանությունները: Մասնավորապես՝ «Մարդը» ժողովածուում ընգրկված բանաստեղծությունները:

Պարույր Սևակի տաղանդը դրսևորվել է ոչ միայն քնարերգության, հոդվածագրության, հրապարակախոսության, գիտական ասպարեզում, այլ նաև թարգմանությունների մեջ: Նրա թարգմանական ժառանգությունը բավականին ընդգրկուն է:

Տաղանդավոր բանաստեղծների մի աստղաբույլ՝ Ա. Պուշկին, Ա. Միցկևիչ, Ջ. Ռոդարի, Վ. Բրյուսով, Յ. Ռայնիս, Ի. Աբաշիձե, Ս. Եսենին, Մ. Լերմոնտով, Է. Մեծելայտիս, հունգար բանաստեղծներ, որոնց ստեղծագործությունները Սևակի շնորհիվ ճանաչվեցին ու սիրվեցին հայ ընթերցողի կողմից: Սևակ- բանաստեղծը մի առանձին վերաբերմունք, հոգեհարազատություն է զգացել, անչափ բարձր գնահատել լիտվացի բանաստեղծ Էդուարդաս Մեծելայտիսին: Աշխատանքի համար կարևոր դեր են խաղացել գրողի գրական, գեղագիտական հայացքները: Մեծելայտիսը տաղանդավոր գրող է: Նա իր երկրորդ հայրենիքը համարել է Հայաստանը, շատ ընդհանրություններ տեսել երկու ժողովուրդների մեջ: Գրողի հետաքրքրությունները անսահմանափակ են, բայց տարբեր թեմաների շոշափման կենտրոնում մարդ – անհատն է: Աշխատանքի նպատակն է բացահայտել Սևակի թարգմանական յուրահատկությունները, նկատել գրական առնչություններ իր և թարգմանվող հեղինակի միջև: Արժևորել թարգմանչի կատարած անգնահատելի ծառայությունը, որն

իր բնույթով երկար ու տքնաջան ստեղծագործական ճանապարհ է: Թարգմանիչը որքան էլ փորձի ազատ վարվել բառերի, քերականական ձևերի ընտրության հարցում, պետք է հոգեհարազատ մնա բնագրին, գրողի ոճին, բայց նաև հարկ եղած դեպքում ինքնուրույնություն ցուցաբերի, հատկապես գեղարվեստական պատկերները վերարտադրելու առումով, որ տվյալ լեզվում դրանք չկորցնեն իրենց իմաստային հատկանիշն ու թարմությունը: Բանաստեղծ - թարգմանչի հմտությունից է կախված թարգմանության մակարդակը: Սևակն անգուգական թարգմանիչ է, նա պատասխանատվությամբ է մոտեցել բնագրերի թարգմանությանը, ընթերցողին հասցրել բանաստեղծության իմաստն ու գրողի ներշնչանքը: Աշխատանքն իրականացնելիս ուսումնասիրել ենք թարգմանական տեսական հոդվածներ, թեմային առնչվող նյութեր:

*Բանալի բառեր և արտահայտություններ. Պարույր Սևակ, թարգմանիչ, հոգեբան- գրող, պոեզիա, գեղարվեստական պատկեր, Էդուարդաս Մեծելայտիս, ներշնչանք, ժառանգություն, ոճ, հայ գրականություն:*

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի ժողովուրդ իր մշակութային արժեքների կողքին կարևորում է թարգմանական գրականությունը: Դարերի պատմություն ունի հայ թարգմանական գանձարանը: Հայաստանում թարգմանության ակունքները սկիզբ են առել հայոց այբուբենի ստեղծման ժամանակներից: Թարգմանական գործի սկզբնավորումը մի նոր դարաշրջան բացեց հայ գրական, հասարակական մտքի զարգացման ասպարեզում: Թարգմանական գրականությունը նպաստեց ժողովուրդներին միմյանց հետ խոսեցնելու, ճանաչելու, գնահատելու, բարեկամական հարաբերությունների, համամարդկային արժեքների ստեղծման նպատակին: «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արծարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունը, այդ կապին մեծապես նպաստում է թարգմանական գրականությունը» (Թումանյան Հ., 1951): Հայ գրականության նշանավոր բանաստեղծ Պարույր Սևակի գրական հարուստ ժառանգության մեջ՝ բանաստեղծական քերթվածներ, պոեմներ, հոդվածներ, հրապարակախոսական

ելույթներ, գիտական բեղմնավոր գործունեություն, կարևոր տեղ է զբաղեցնում թարգմանական գործունեությունը: 1956 թվականին ավարտելով Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտը՝ Սևակը դասախոսել է նույն ինստիտուտի թարգմանական ամբիոնում և այդ ժամանակներից սկսած մեծ հետաքրքրություն ցուցաբերել թարգմանական գրականության հանդեպ: Նրա տաղանդը դրսևորվել է նաև անգուգական թարգմանությունների մեջ: Բավականին ընդգրկուն է Սևակի թարգմանական ընտրանին. Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ա. Միցկևիչ, Վլ. Մայակովսկի, Վ. Բրյուսով, Ս. Եսենին, Ջ. Ռոդարի, Յ. Ռայնիս, Բ. Բոտև, Յա. Կուպալա, Ի. Աբաշիձե, Գ. Տաբիձե, Է. Մեծելայտիս, հունգար բանաստեղծներ...: Այս աստղաբույլի մեջ կարելի է առանձնացնել Էդուարդաս Մեծելայտիսի անունը, որի հետ Սևակը բարեկամական հարաբերությունների մեջ է եղել, սիրել ու արժևորել թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ իբրև մարդ: Գնահատականները փոխադարձ են եղել: Սևակը թարգմանել է Մեծելայտիսի «Մարդը» ժողովածուն: Մեծելայտիսն էլ տարբեր առիթներով անդրադարձել է Սևակին: 1975 թվականին Մոսկվայի «Художественная литература» հրատարակչությունը լույս է ընծայում Սևակի «Հատընտիրը», Մեծելայտիսը հանդես է գալիս գրքի առաջաբանով «Լույսի ու բարության երգիչը» խորագրով: Երկու գրողները շատ ընդհանրություններ ունեն գրական հայացքների, բանաստեղծական մտածողության, թեմաների ընտրության, պատկերակերտման առումով: Տարիներ անց, Մեծելայտիսը խոստովանել է. «Հատուկ համակրանք եմ զգում անմոռաց Պարույր Սևակի հանդեպ, որի հետ մեզ կապում էր հոգեկան հարազատությունը և ստեղծագործական համագործակցությունը: Նա ինձ համար միշտ կենդանի է» (Մեծելայտիս Է., 2013):

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում ընկած է Պ. Սևակի թարգմանչական գործունեությունը, մասնավորապես Սևակ – Մեծելայտիս առնչությունները, գրական կապերը, քննվող նյութի համադրման սկզբունքը: Աշխատանքն իրականացնելիս ուսումնասիրել ենք Պարույր Սևակի և Էդուարդաս Մեծելայտիսի՝ նույն թեմային վերաբերող թարգմանությունները,

թարգմանությունների վերաբերյալ տեսական աղբյուրներն ու հետաքրքրաշարժ փաստերը:

Հոդվածը շարադրելիս օգտվել ենք գրականագիտության մեջ ընդունված և հաճախ կիրառվող վերլուծական, քննական մեթոդներից:

### **ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Պարույր Սևակ – Էդուարդաս Մեծելայտիս հեռակա ծանոթությունը սկիզբ դրվեց լիտվացի բանաստեղծի «Մարդը» ժողովածուի հայերեն թարգմանությամբ: Անմիջական հանդիպումը ճակատագիրը կանխատեսել էր Բուդապեշտ ուղևորվող օդանավում, երբ 1966թ. Խորհրդային գրողների պատվիրակության կազմում ընդգրկված Մեծելայտիսն ու Սևակը պետք է մասնակցեին Հունգարիայում կազմակերպված բանաստեղծների համավերոպական կոնգրեսին: Այնքան պարզ ու մտերմիկ էր նրանց անդրանիկ հանդիպումը, ասես վաղուց ծանոթներ էին և սուրճի բաժակի շուրջ սովորականի նման շարունակում էին հերթական գրույցը: Մեծելայտիսը հետո պիտի գրեր իր տպավորությունները. «Կյանքում Սևակը շատ անմիջական էր, բարի, զգայուն, բաց հոգու տեր մարդ: Թեև մի քիչ էլ «ծուռ»: Նրա հետ շփվելը հեշտ էր ու հաճելի: Նրա միտքը, ողջ ինտելեկտը համազոր էին հայոց խորհրդանշական նահապետ Արարատի իմաստուն ու ճերմակ բարձունքներին, նրա մարդկային և բանաստեղծական խառնվածքը լեռնային գետակի բուռն հոսք էր հիշեցնում: Դիմացինի միտքը որսում էր ակնթարթորեն, թենիսի գնդակի նման և անմիջապես էլ նույն գնդակի նման փոխանցում իր միտքը: Այդպիսի ինտելեկտի, այդպիսի կենդանի մտքի հետ հեշտ ու հաճելի է շփվելը: Մենք կարծես խաղում էինք մտքերով, բառերով, բանաստեղծական տներով, բայց փաստորեն փիլիսոփայում էինք: Բուն հայկական խառնվածքի մարդ, նույնիսկ մի փոքր էկզոտիկ: Սակայն նրա ներքին ու արտաքին նկարագրի այդ էկզոտիկան ինձ շատ էր դուր գալիս, ես նրան համեմատում էի գանգրահեր Պուշկինի, վերածնության մեծ վարպետների կտավների որոշ կերպարների հետ: Ինձ թվում է նրա երակներով ոչ թե սովորական արյուն է հոսում, այլ խաղողի հյութ դարձած սարյանական արևը... (Փարսադանյան Ա., 2006):

Լիտվացի մեծ բանաստեղծի բարեկամությունը Հայաստանի հետ խոր արմատներ ունի:

Նա իր գրական ճանապարհին կատարել է բազմաթիվ թարգմանություններ հայ հեղինակներից, գրել է տասնյակ հոդվածներ, գրախոսություններ, որոնք ընդգրկվել են «Իմ կրկնակի Արարատը» ժողովածուում (Մեծելայտիս Է., 2013): Բանաստեղծը երեք անգամ՝ 1969, 1979, 1982 թվականներին, տարբեր առիթներով այցելել է Հայաստան և տարիների ընթացքում մտերմացել, ճանաչել ու սիրել մեր երկիրը՝ գրելով այս ինքնաբուխ տողերը. «Հայաստանն ինձ առինքնել է առհավետ, ինձ համար յուրաքանչյուր հանդիպում իմ սիրելի Հայաստանի հետ նշանավոր իրադարձություն է: Հայաստանի հետ շփումը ինձ համար ավելին է, քան բարեկամությունը: Դա իմ ուշացած սերն է, սակայն մի տարբերությամբ, այն ծնունդ էր առել դեռ վաղուց իմ ծաղկող երիտասարդության տարիներից: Այդ իսկ պատճառով էլ այն այդքան ուժեղ է՝ ինչպես առաջին սերը» (Մեծելայտիս Է., 2013): Էդուարդաս Մեծելայտիսը, որ ինքնամոռաց սիրել է Հայաստանը՝ այն համարելով իր երկրորդ հոգևոր հայրենիքը, խորին հարգանքով խոստովանել է, որ «եթե Հայաստանը ոչինչ անգամ չունենար մեծն Նարեկացուց բացի, այդ էլ բավական էր՝ ընդունելու նրա վիթխարի ավանդը համամարդկային մշակույթի ասպարեզում» (Մեծելայտիս Է., 2013): Նշանավոր բանաստեղծի համար հայ ժողովուրդը դարձավ հոգեհարազատ իր ավանդույթներով, ազգային յուրահատկություններով, նա ընդհանուր շատ բաներ նկատեց հայ և լիտվացի ժողովուրդների բնավորության, պատմական ճակատագրի, լավատեսության մեջ: Մեծելայտիսը մի առանձին գործվանքով սիրեց ու գնահատեց Պարույր Սևակին. «Նա խոր մտածող, փիլիսոփա բանաստեղծ է: Նրան կարելի է անվանել քնարական մտածող: Սևակը երգիչն է մտքի, ազատության ու մարդկության: Նա ձգտում է մարդկային կատարելության՝ ազնվության, բարության, ինքնագոհության, և նույնը պահանջում է ուրիշներից» (Մեծելայտիս Է., 2013): Պարույր Սևակ մեծ բանաստեղծը չի զիջում նաև Սևակ թարգմանչին: «Պոեզիան մարդկային ինքնաարտահայտման ձևերից մեկն է» (Սևակ Պ., 1983), - գրում է Սևակը, և ակնածանքով ոտք դնում այդ ասպարեզ, էական չէ, ինքը բանաստեղծության հեղինակն է, թե թարգմանում է: Երկու դեպքում էլ պատասխանատվությունը, ստեղծագործական տառապանքը, վառ երևակայությունը, խորագրերի ընտրությունը կարևոր են: Սևակի համար

«բանաստեղծության ծնունդը նման է աստղերի ծնունդին», բանաստեղծն ինքնաարտահայտմամբ, սրտի թելադրանքով անկեղծանում է դիմացինի հետ, իսկ թարգմանության ժամանակ նա առավել փորձում է պահպանել բնագրային տարբերակը, իմաստի ճիշտ փոխանցումը, բառերի համապատասխան ընտրությունը, հանգավորման համակարգը: Նրա համար թարգմանությունը հավասարազոր է նոր բանաստեղծության երկունքի, «թարգմանությունը արվեստ է» չափանիշով է փորձում հաղորդակից դառնալ գրչակից ընկերոջ ապրումներին, հոգեկան տրամադրվածությանը: Սևակն անսահման բծախնդրությամբ ու նվիրումով է մոտենում բնագրերի թարգմանությանը, ձգտում հավատարիմ մնալ դասական թարգմանչության ավանդներին, օտար մշակույթին ու լեզվին: Թարգմանչի դերում հանդես եկող Սևակ – բանաստեղծը հասկանում է, որ արվեստագետի ոճը երևում է ամբողջ բանաստեղծական կառույցում: Ժամանակին Դ. Վարուժանն էլ նման կարծիք է հայտնել. «Ոճը տաղանդին անձնական դրոշմն է, այն որքան ինքնուրույն ըլլա՝ տաղանդը ավելի ինքնուրույն է... Ոճը կկայանա, շարադասության, դարձվածքներու, շեշտի, բացատրություններու, պատկերներու, եւ բառերու մշտաբուխ ստեղծագործության մը մեջ» (**Վարուժան Դ., 1987**): Սևակը ջանացել է խորանալ բանաստեղծության էության մեջ, պահպանել հեղինակային ոճը, պատկերավոր մտածողությունը, ընթերցողին փոխանցել բանաստեղծության հուզական կողմը, ներշնչանքը: Մի առիթով, խոսելով իր կատարած թարգմանությունների մասին, Սևակն ասել է. «Թարգմանում եմ այն բանաստեղծությունները, որոնք ես պետք է գրած լինեի, բայց ինձ նրանց հեղինակները կանխել են», իսկ Հ.Սահյանն էլ շարունակելով միտքն ավելացնում է. «Թարգմանում ես՝ քեզ մոտիկ ու հարազատ բանաստեղծին: Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործության մի մասը» (**Սահյան Հ., 2012**): Մեծելայտիսից թարգմանած ժողովածուն հաստատում է բանաստեղծի խոսքը. այն սրտամոտ է Սևակի աշխարհայացքին, մարդու հանդեպ՝ նրա հոգեբանական, փիլիսոփայական ընկալումներին: Սևակն անդրադառնալով Մեծելայտիսի «Մարդը» ժողովածուի թարգմանությանը՝ գրել է. «Թարգմանելով Մեծելայտիսի «Մարդը», ես ինձ զգում էի ոչ թե նրա մրցակից, այլ նրա զինակիցը և այդ պատճառով ստացա ոչ թե

աշխատանքային (трудова́я) բավականություն, այլ հոգեկան» (**Արիստակեսյան Ա., 1974**): Սևակը սուկ թարգմանիչ չէր կարող լինել և ընդամենը ծանոթացներ հայ ընթերցողին ժողովածուն: Նա ստեղծագործական երկար ճանապարհ է անցել և հավատարիմ այն տեսակետին, որ պոեզիայի թարգմանիչը պետք է բանաստեղծ լինի, առավել զգուշություն է ցուցաբերել՝ գեղարվեստական պատկերները վերարտադրելու առումով, որ տվյալ լեզվում դրանք չկորցնեն իրենց իմաստային հատկանիշն ու թարմությունը: Բավական է աչքի անցկացնել Մեծելայտիսի ժողովածուն և ակնառու է դառնում մի շարք ընդհանրություններ՝ երկու բանաստեղծներին բնորոշ: Նախ խորագրերը ժողովածուների. Մեծելայտիս՝ «Մարդը», Սևակ՝ «Մարդը ափի մեջ», գեղարվեստական կառուցվածքով՝ գրված են բանաստեղծական շարքերի ձևով, գլխավոր թեման մարդ – անհատն է՝ իր առեղծվածային կերպարով, հոգու բացահայտմամբ, մարդկային տվյալանքներով: Բանաստեղծական շարքերն ունեն նաև տրամաբանական սկիզբ, զարգացում և ավարտ: Երկու գրողներն էլ գեղագիտական ընդհանրություններով, ազգային բնավորության յուրահատկություններով, հախտուն խառնվածքով փորձում են հասնել մարդու գոյության հաստատմանը, հասկանալ նրա առաքելությունն այս կյանքում: «Մարդը» ժողովածուն հոգեհարազատ է Սևակին, նրա գեղագիտական ըմբռնումներին: Այս փոխադարձ նմանությունն են փաստում գրականագետի տողերը. «Սևակը, մարդուն տեսնելով, նրան քննելով ծնունդի ու մահվան սահմանագծի մեջ, խոստովանեցնում էր նրան և լսելի դարձնում նրա ձայնը, երբ նա լիարժեք ապրում էր իր կյանքը: Նույն զգացողությամբ Մեծելայտիսն էր փառաբանում մարդուն, բայց ոչ թե ինքնավերլուծվող մարդուն, ինչպես Սևակը, այլ ընդհանրապես մարդ արարածին: Երկրից երկինք ձգվող վիթխարի տարածության մեջ նա քանդակում է առողջ ու գեղեցիկ մարդուն, ապա նաև բացում նրա աշխարհը, ուր կա սեր ու մեղեդի, ուր կա սիրտ ու միտք: Սևակը Մեծելայտիսի մեջ տեսել է իր գործի շարունակությունը և այդ թարգմանություններով լրացրել ինքն իրեն: Մարդուն կործանած ժամանակի գրականության մեջ, նրանք երկուսն էլ մարդախույզ «երկրաբաններ» էին (**Գասպարյան Դ., 2001**):

Սևակի թարգմանության շնորհիվ, հայ ընթերցողը ճանաչում է բանաստեղծ Մեծելայտիսին՝ իբրև հզոր մի անհատականության, որը դարի բոլոր երևույթները, արհավիրքները, մարդկային տագնապները, մարդուն ազնվացնող զգացումները անց է կացրել իր հոգով, դրել քնարական ու հերոսական չափ ու ձևի մեջ:

Երկու ոտքով ամուր հենված հողագնդին՝

Ես արևի գունդն եմ պահում իմ ձեռքերով:

Ես կամուրջն եմ արևի և երկրի միջև.

Իմ վրայով արևն իջնում դեպի երկիր,

Իսկ երկիրը դեպի արև է բարձրանում:

Եվ առանց ինձ երկիրն ի՛նչ է,

Մի անկենդան,

Տափակեցված ու կնճռապատ մի գունդ է լոկ,

Որ մոլորվել անձայրածիր միջոցի մեջ

Ու լուսնյակի պաղ հայելում տեսնում է պարզ,

Թե որքան է ինքը մեռյալ,

Նաև տգեղ (Մեծելայտիս Է., 2013):

Գրքի առաջին մասը թվում է հիմն է մարդուն: Սակայն մարդուն ուղղված գովերգը ավելի խոր արմատներ ունի, քայլ առ քայլ հեղինակը բացահայտում է մարդ էակին՝ նա մի դեպքում հսկա է՝ անմատչելի իր վեհության մեջ, մարդ- ծառ (այլաբանական), մեկ իրական մարդ, մեկ էլ քնարական հերոս: Դարի ու ժամանակի կտրվածքով հայտնվում է մարդը, նրա գոյապայքարը՝ անցնելիք փորձությունների ճանապարհին: Առաջին հայացքից խճճված է ուրվագծվում գրքի կերպարը, բայց ուշադիր լինելու դեպքում բացահայտվում է քնարական հերոսի հարցադրումները, որն ուղղված է դիմացինին, իր նմանին:

Դուք տեսել եք հողմից քշված ծառ, որ անահ

Սավառնում է, ասես բնավ քաշ չունենա,

Քամուն տված կուրծքն իր կանաչ ու վետվետուն՝

Իր ճյուղերով դեպի երկինք է նա միտում:

Ու թոչում է՝ բաց անելով ծուռ ու կանաչ իր թները,  
 Թոչում այնտեղ, որ ամպերն են ագռավի պես սևին տալիս,  
 Բայց արևի դեմքն են բացում ագռավային այդ սները,  
 Եվ այլևս շեկ կայծակից գարհուրանքի հոտ չի գալիս:

(Մեծելայտիս Է., 2013):

«Քնարական հերոս» արտահայտությունը ուշագրավ մեկնաբանություն է ստացել Էդ.Ջրբաշյանի «Քնարական հերոսի մասին» հոդվածում. «Քնարական հերոսը ինքը բանաստեղծն է, բայց ոչ տառացի, կենցաղային – կենսագրական իմաստով: Նրա բնավորությունն ու հույզերը մաքրված են պատահական ու անկարևոր գծերից, բարձրացված են գեղարվեստական տիպականացման և հասարակական լայն հնչեղության աստիճանի: Այդ պատճառով էլ դա ոչ թե պարզապես «բանաստեղծն» է կամ «հեղինակը», այլ քնարական հերոս, որի բնավորության մեջ, մենք տեսնում ենք և՛ պոետին, և՛ դարաշրջանի ու որոշակի դասակարգի մարդկանց խոհերը, հույզերը, ձգտումները» («Գրական թերթ», 1963): Շարունակվում է գրույցը, և այս անգամ մարդ էակը իր նմանին մեղադրում է նրա արարքների, գործած մեղքերի համար: Ժամանակն անգոր է մոռացնել տալու չարագործությունները, հիշողությունը ժամկետ չունի:

Մի՞ թե փտող մարմինների գարշահոտը

չի դիպչում քո

Դեմքին, երբ դու հերկում ես դաշտերը:

Մի՞ թե դեռևս դու չես հասկացել,

որ քո անցյալ բոլոր

Արարքներից մնում է միայն մի լճակ՝

կիզիչ արյունի և սև արյան (Մեծելայտիս Է., 2013):

Ժողովածուի բանաստեղծությունները օրգանապես կապված են իրար և ներդաշնակ ներկայացնում են գրողի մտահղացումները, որոնց խորագրերն անգամ նպատակային են «Մարդը», «Ձեռքերը», «Սիրտը», «Արյունը», «Աչքերը», «Մազերը», «Շուրթերը», «Մտքերը», «Ձայնը» ... (Մեծելայտիս Է., 2013):

Հրաշալի թարգմանությունների շնորհիվ բանաստեղծական պատկերների գեղեցկությունը, հեղինակի ոգևորությունը ընկալելի ու շոշափելի են դառնում:

Մայր հողի մարմինն է քարը,  
 Լեռները՝ իր ողնաշարը,  
 Գետերը՝ երակ – զարկերակ...  
 Ու ես էլ նույն հողի գավակ:  
 Հացից եմ, հացից հանճարի,  
 Որ հողն է ծնում ցավերով,  
 Գարուց եմ, եռաց այդ գարին՝

Կարբենաք դեղին գավերով (Մեծելայտիս Է., 2013):

«Լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության» - մի առիթով ասել է Թումանյանը: Մա այն դեպքն է, որ բանաստեղծությունը թարգմանելուց հետո ակնհայտ հիշեցնում է թարգմանիչ – բանաստեղծին, տվյալ հեղինակինն է դառնում:

Լիտվացի բանաստեղծը պատասխանատու է զգում մարդկության ներկայի ու ապագայի համար և արժանապատվությամբ կրում այդ նվիրական բեռը իր ուսերին.

Դու հարցնում ես, թե ինչու է անժամանակ սպիտակել  
 Իմ գլուխը, որ մթին էր, ինչպես հերկը սևահողի:  
 Սև գլուխս լուսավորվեց այն լուսավոր բախտի շողից,  
 Որով սիրտս սև աղետի ճանապարհն է մի օր փակել:  
 Երբ աղետը չքվի իսպառ և իր մահվան բոթը երգի,  
 Ոչ մի սև թել չի պսպղա մազերի մեջ իմ սպիտակ,  
 Իբրև ճերմակ խնձորենի՝ ես կծաղկեմ ճամփեզերքին

Եվ կմնամ այդպես տնկված ու լույս կտամ (Մեծելայտիս Է., 2013):

Թարգմանության տողերը հեռավոր արձագանքն են Սևակի բանաստեղծության.

Օ, չեմ կարող երբեք, իմ բարեկամ,  
 Հեռու մնալ ցավից իմ այս դարի,  
 Մարդկության սին բախտից, եթե անգամ

Իմ լույսն այս խավարում անդարձ մարի ...

Եվ այսօր, դառնադի այս օրերում,

Այս օրերում անլույս և խիստ մըթար

Թռչել դեպի եթեր, թռչել հեռու,

Թողնել նրան այսպես անմխիթար (**Սևակ Պ., 1985**):

Շարքի բանաստեղծությունները գաղափարապես կապված են միմյանց և մեկ ամբողջություն են կազմում, բավական է հերթականությունը խախտել, կիմաստագրկվի հեղինակի՝ քնարական հերոսի մտահղացումը: Երկու բանաստեղծների ստեղծագործության կենտրոնում մարդն է: Նրանք ապրում են մարդու ճակատագրով, օգնում ու կարեկցում, դժվարին պահերին սատար կանգնում, մարդկային ցավն ու տառապանքը անցնում է նրանց սրտի միջով, նրանք չեն կարող անտարբեր մնալ, շարունակ ականջալուր մարդ էակի բոլոր զգացողություններին՝ նրանց միտքն ու սիրտը բաբախում է՝ հանուն մարդու ուրախության, հաջողության, ձեռքբերումների: Երկու բանաստեղծներն էլ մարդուն քննում են իրենց համակողմանի տեսադաշտում, բանաստեղծական ներքին պոռթկումով ուսումնասիրում ու դիտարկում են նրան տարբեր կողմերից: Նրանք թափանցում են խորքն այն ամենի, ինչ մարդկային է: «Աշխարհին մաքրություն է պետք» ակնածանքով գրում է Սևակը և փորձում մարդուն մաքրել կործանարար չարից, նախանձից, անտարբերությունից՝ ազդարարելով մարդու բարոյական վսեմ հաղթանակը: Մեծելայտիսի մոտ այդ հաղթանակը տիեզերական է, բանաստեղծն անմիջական կապ է ստեղծում շարքի առաջին «Մարդը» և վերջին «Իկար» խորհրդանշական անունը կրող բանաստեղծության միջև, որոնց արանքով ընթացել է փոթորկուն, հարափոփոխ մի ամբողջ կյանք.

Ուրեմն ինչ էր Երկրի վրա պակասում քեզ...

Պակասում էր մե՛կ բան

Միայն - աստղեր տեսնել ոտքերի տակ:

Մեկ բան միայն – Տիեզերքը՝ սրտի

Նման՝ բացված տեսնել (**Մեծելայտիս Է., 2013**):

Երկու բանաստեղծներն էլ մարդու մասին ունեն իրենց հայեցակետը, մեկնաբանությունը, բայց վերջնական եզրահանգմամբ նրանց միավորում է նույն գաղափարը՝ մարդուն տեսնել կատարյալ, ազնիվ, բարի, լուսավոր: Նրանք խոսում են իրենց անունից, բայց ներկայանում են դարաշրջանի, համայն մարդկության ձայնով, մտքերով, ամենքի մասին:

### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Պարույր Սևակը տաղանդավոր է ոչ միայն բանաստեղծ, քննադատ, գիտնական, այլ նաև թարգմանիչ: Անգնահատելի է նրա ծառայությունը թարգմանությունների առումով: Նրա թարգմանությունների շարքում առանձնանում է Մեծելայտիսի հետ համագործակցությունը: Շատ նմանություններ, գրական առնչություններ կարելի է նկատել նրանց միջև: Նրանց ստեղծագործության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մարդը՝ իր ճակատագրով, իր տարբեր զգացողություններով: Պատահական չեն ընտրվել անգամ ժողովածուների խորագրերը՝ «Մարդը» և «Մարդը ափի մեջ», ուր երևում է երկու բանաստեղծների մտահոգությունը, տազնապը՝ մարդու ապրած կյանքի, նրա ուրախությունների, հաջողությունների, նրան կատարյալ տեսնելու համար: Բավականին տարողունակ է Սևակի թողած թարգմանական գրականությունը, այն աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ, ինքնատիպ ոճով ու գրելաձևով: Նա զգուշորեն է մոտենում բնագրերին, կարողանում հարազատ մնալ բանաստեղծության խորությանն ու ներշնչանքին: Սևակը ստեղծել է լավ ավանդույթներ թարգմանության ասպարեզում, նրա ինքնատիպ խոհերը թարգմանությունների վերաբերյալ շատ արդիական են և ուսանելի: Բանաստեղծ Սևակը անզուգական է նաև իբրև թարգմանիչ:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Արիստակեսյան Ա. (1974), Պարույր Սևակ. Մենագրություն, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
2. Գասպարյան Դ. (2001), Պարույր Սևակ. Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Զանգակ» հրատ.:

3. **Դավթյան Շ. (2012)**, Համո Սահյան. Հանրագիտարան, Երևան, «Գիտություն» հրատ.:
4. **Թումանյան Հ. (1951)**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, Հայպետհրատ:
5. **Մեծելայտիս Է. (2013)**, Իմ կրկնակի Արարատը, Երևան, «Գասպրինտ»:
6. **Մեծելայտիս Է. (2013)**, «Մարդը» ժողովածուն՝ Պարույր Սևակի թարգմանությամբ, Երևան, «Գասպրինտ»:
7. **Սևակ Պ. (1983)**, Երկեր, հ. 3, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
8. **Սևակ Պ. (1985)**, Մուտք, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
9. **Վարուժան Դ. (1987)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ:
10. **Զրբաշյան Է. (1963)**, Քնարական հերոսի մասին, «Գրական թերթ», թիվ 30, Երևան:
11. **Փարսադանյան Ա. (2006)**, Դոդանջ անմահության, Երևան, «ՎՍՎ– ՊԲԻՆՏ»:

#### REFERENCES

1. **Aristakesyan A. (1974)**, Parowyr Sevak. Menagrowth'yown /Paruyr Sevak, monograph/, Yerevan, “Soviet writer”.
2. **Gasparyan D. (2001)**, Parowyr S&ak. Kyanqy' & steghc'agorc'owt'yowny' /Paruyr Sevak, Life and creativite/, Yerevan, “Zangak”.
3. **Davtyan Sh. (2012)**, Hamo Sahyan. Hanragitaran /Hamo Sahyan, Encyclopedia/, Yerevan, “Science”.
4. **Tumanyan H. (1951)**, Erkeri jhoghovac'ow /Erker/, No 4, Yerevan, “Haypet newspaper”.
5. **Mezhelaitis E. (2013)**, Im krknaki Araraty' /My double Ararat/, Yerevan, “Gasprint”.
6. **Mezhelaitis E. (2013)**, «Mardy» jhoghovac'own՝ Parowyr Sevaki t'argmanowt'yamb /“Man” collection txanslated by P.Sevak/, Yerevan, “Gasprint”.
7. **Sevak P. (1983)**, Erker /Erker/, No 3, Yerevan, “Soviet writer”.

8. Sevak P. (1985), Mowtq /Entry/, Yerevan, “Soviet writer”.
9. Varuzhan D. (1987), Erkeri liakatar jhoghovac'ow /Erker/, No 3, Yerevan, M.Abeghyan Institute of Literature.
10. Jpbashyan E. (1963), Qnarakan herosi masin /About the lyrical hero/, “Grakan t'ert”, No 30, Yerevan.
11. Parsadanyan A. (2006), Ghoghanj anmahowt'yan /A call to immortality/, Yerevan, “VMV – PRINT”.

Арменуи Мурадян

### Паруйр Севак - переводчик Эдуардас Межелайтиса

#### Заключение

*Ключевые слова и выражения:* Паруйр Севак, переводчик, писатель - психолог, поэзия, художественный образ, Эдуардас Межелайтис, вдохновение, наследство, стиль, армянская литература.

В статье рассматриваются переводы, П. Севака из Эд. Межелайтиса. В частности, из сборника Межелайтиса «Человек».

Талант П. Севака проявился не только в лирике, эссе, прозе, научной сфере, но и в переводах. Его переводческое наследие весьма обширно. Созвездие талантливых поэтов:

А Пушкин, А Мицкевич, Дж. Родари, И Абашидзе, В Брюсов, Ю. Райнис, М. Лермонтов, С. Есенин, Эд. Межелайтис, венгерские поэты, творчество которых получило признание благодаря Севака и были любимы читателем.

Севак - поэт чувствовал особое отношение, близость души, высоко ценил литовского поэта Эд. Межелайтис. В произведении важную роль сыграли литературно – эстетические взгляды писателя. Межелайтис талантливый писатель. Он считал Армению своей второй родиной, видел много общего между двумя народами. Интересы писателя безграничны, но в центре общения по различным темам находится личность. Цель работы – раскрыть особенности перевода Севака, отметить литературные связи

между н2им и переводящим автором. Оценить неоценимую услугу перевода, которой по своей природе представляет собой долгий и кропотливый творческий путь. Как бы переводчик ни старался действовать свободно в выборе слов и грамматических форм, он должен оставаться близким к оригиналу, стилю писателя, но и при необходимости проявлять самостоятельность, особенно в плане воспроизведения художественных образов, чтобы они не теряют своих смысловых характеристик и свежести в данном языке.

Уровень перевода зависит от мастерства поэта – переводчика. Севак – несравненный переводчик, он ответственно подошел к переводу оригинала и донос до читателя смысл стихотворения и вдохновение писателя. При выполнении работы мы изучали переводческие статьи, тематические материалы.

**Armenuhi Muradyan**

**Paruyr Sevak- translator of Eduardas mezhelaitis**

### **Conclusion**

*Key words and expressions: Paruyr Sevak, translator, psychological writer, poetry, artistic image, Eduardas Mezhelaitis, inspiration, heritage, style, Armenian Literature.*

The article examines Paruyr Sevak’s translations from E. Mezhelaitis. In particular, the poems included in the “Man” collection. Paruyr Sevak’s talent was manifested not only in lyric poetry, article writing, public speaking, scientific field, but also in translations. His translation heritage is quite comprehensive. A constellation of talented poets: A.Pushkin, A.Mickevich, J.Rodari, V.Brusov, Y.Rainis, I.Abashidze, S.Yesenin, M. Lermontov, E.Mezhelaitis, Hungarian poets, whose works were recognized and loved by the Armenian audience thanks to Sevak. Sevak- the poet felt a special attitude, closeness to his soul, highly appreciated the Lithuanian poet E.Mezhelaitis. The literary and aesthetic views of the writer played an important role in the work. Mezhelaitis is a talented writer. He considered Armenia his second homeland, saw a lot of commonalities between two peoples.

The writer's interests are unlimited, but at the center is the person- the individual. The purpose of the work is to reveal the peculiarities of Sevak's translation, to notice literary relations between him and the author being translated. To appreciate the invaluable service performed by the translator, which by its nature is a long and painstaking creative path. No matter how much the translator tries to act freely in the choice of words and grammatical forms, he must remain close to the original text, the writer's style, but also, show independence when necessary, especially in reproducing artistic images, so that they do not lose their semantic characteristics and freshness in the given language. Poet- translator the level of translation depends on the skill.

Sevak is an incomparable translator, he approached the translation of the originals with responsibility, conveyed to the reader the meaning of the work and the writer's inspiration. While carrying out of the work, we studied translation theoretical articles, materials related to the topic.

**Արմենուհի Մուրադյան** – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականության պատմություն, նորագույն շրջանի հայ գրականություն, կառուցվածքաբանական գրականագիտություն: Հեղինակ է շուրջ հինգ տասնյակ հոդվածի: armenuhi – [muradyan@mail.ru](mailto:muradyan@mail.ru).

**Арменуи Мурадян** – Доцент кафедрой новой и новейшей армянской литературы и методики ее преподавания Государственного института имени Хачатура Абовяна. Кандидат филологических наук. Научные интересы: история армянской литературы, история армянской литературы новейшего времени, структурное литературоведение. Автор около пять десятков статей.

armenuhi - muradyan@ mail.ru

**Armenuhi Muradyan** - Docent of the Chair of Armenian New and Modern Literature and its Teaching Methods at ASPU named after Khachatur Abovyan. Candidat of philological sciences. Scientific interest: History of Armenian Literature (second half of the 19th century). History of Armenian Literature (modern Armenian literature and structural literary studies, He is an author of about five dozen articles.

armenuhi - muradyan @ mail.ru

*Խմբագրություն է ուղարկվել 27.01.2026թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 12.02.2026թ.*

*Հրատարակման է ներկայացվել 31.03.2026թ.*